

Զայնիւ զոչելով, աւաղ ստելով,
 մթացեալ հոգւովս ընդ քեզ ելանիմ .
 Ղեկավարդ ճարտար յաշխարհ հեռացար,
 զեկիս մոլորեալ հոգով մեռանիմ .
 ձեւոտ յաշխարհէս կամաւ հետեւիմ
 ձախողի եղեալ որո՞վ ես ուղղիմ
 Մաղթելով հայցեմ, առ քեզ պաղատիմ, 20
 որբացեալ որդեակս ընդ քեզ մեռանիմ :
 Յաիրացեալ սրտիս վիրօք խոցոտիմ,
 յանցաւ աշխարհէս զիա՞րդ ելանեմ .
 Երբեւեալ հոգւով մոլորեալ չըջիմ,
 Յովհաննէս Կախիկ առ քեզ հասաչեմ .
 Շարարարդեալ մեղաց ուժգին զարհուրեմ,
 նախնիդ իմ Գրիգոր, առ քեզ աղերսեմ .
 Ողբոց արժանիս կսկիծ աղէտիս,
 Մխիթար տոհմի լալով պաղատիմ .
 Զորացեալ խոիւս հրով տոչորիմ . 25
 Կարապետ արի առ քեզ անկանիմ .
 Պարուրեաց կսկիծ իմ յաղէս գորովի .
 Յովհաննէս Համչի առ քեզ զիմեցի .
 Զաղելով կոծիմ, սրտիւ խոցոտիմ,
 Գրիգոր Տարօնի առ քեզ բողոքիմ .
 Ռիմ չարացեալս խելագար չըջիմ .
 Թորոս անուանի մեծաւ պաղատիմ .
 Սովեալ կորնչիմ քաղցեալ մեռանիմ,
 Յովհաննէս Շիրաք առ քեզ աղերսեմ .
 Վիրօք խոցոտիմ, չարաւ տեսանեմ, 30
 Ղուկասդ վեհի կոծով պաղատիմ .

17 ելանեմ A: — 18 զեկօարդ A: — 19 ես չիք AB: — 21 աւկէ սկսեալ կը պակսի B: — 22 հոգով A: — 23 յոյժգին A: — 26, 29, 32 Յովանէս A: